հասցե՝ Երևան 0039, Արտաշիսյան 46/1
հեռ.՝ 011303303, 010461841
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" MEDICAL CENTRE JSC

№ ԱՄԿ-267 21 05 2024թ.

Որոշում N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/22
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/22 ծածկագրով փափուկ գույքի գնման ընթացակարգ, որի շրջանակներում 2,11-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, Պատվիրատուն 22.04.2024թ.-ին պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ առաջարկելով մինչև 29.04.2024թ-ը ներկայացնել հաստատված պայմանագիրը պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին: Գնման գործընթացի մասնակից հանդես եկած ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ Ա/Ձ-ն՝ չներկայացնելով իր կողմից հաստատված պայմանագրի օրինակն ու պայմանագրի և որակավորման ապահովումները, զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

1. Հիմնավորում և եզրահանգում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների համակարգող
Հեռ. /094/ 53 71 63